ՀՀ Լոռու մարզում «Գենդերային քաղաքականության իրականացման» 2019 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ

Տեղեկատվություն

h/h	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Կազմապերպվել է իրազեկման հանդիպումներ «Կին քաղաքական գործիչների քաղաքական և քաղաքացիական նախաձեռնությունները որպես համայնքում կանանց հզորացման և միջհամայնքային համագործակցության միջոց» ծրագրի շրջանակներում:	Կազմակերպվել է /Վանաձոր, Սպիտակ, Վահագնաձոր, Վահագնի, Անտառամուտ/ համայնքներում մասնակցային ժողովրդավարության կանանց գործընթացներում կանանց դերի բարձրացման հնարավորությունները և հեռանկարները թեմայով սեմինար և կլոր սեղաններ:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ՝ JAZ գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
2.	Կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ մարզի 7 համայնքներում «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում:	Բարձրացվել է 7 համայնքի շուրջ 300 բնակիչների իրազեկվածության մակարդակը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը որպես գենդերային բռնության տեսակ հիմնախնդրի շուրջ:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ՝ World Vision ՀԿ
3.	Իրականացվել է «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում ամուսնացած զույգերի և առանձին երիտասարդների հետ հանդիպում-քննարկումներ/Ալավերդու տարածաշրջանում/:	Բաղկացած է եղել երկու խմբից՝ ծնողական զույգեր և երիտասարդներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝ 1.Ինչ է գենդեր կոչվածը 2.Ինչպես են արտահայտվում կանայք և տղամարդիկ 3.Քննարկվել է ծնողավարության, երեխայի խնամքի իրականացման և համատեղ որոշումների կայացնելու թեմաները /Ալավերդու տարածաշրջան/	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ՝ World Vision ՀԿ

	Կազմակերպվել են մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկա-վարների աշխատակազմերում) կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ	Մարզի մի շարք համայնքների աշխատակիցների համար հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անց են կացվել «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	Վանաձոր քաղաքում կազմակերպվել է «Կանանց լիդերության դպրոց» ծրագիրը որին մասնակցել են մարզի 2 համայնքների 27 կանայք, դպրոցի ծրագիրը 24 ժամ, ներառել է 4 կրթական մոդուլներ	Ծրագրին մասնակցել են մարզի 2 համայնքների 27 կանայք: «Կանանց լիդերության դպրոց»-ի ծրագրի տևողությունը 24 ժամ էր, ներառված է եղել4 կրթական մոդուլներ:Ծրագրի ավարտին մասնակիցներին տրվել է վկայականներ:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
5.	Իրականացվել է իրազեկման աշխատանքներ «Բռնություն, խաղաղ ընտանիքներ և համայնքներ» թեմաներով իրազեկման հանդիպումներ:	Բացահայտվել են 45 ընտանիքներում կանանց և տղամարդկանց ներդաշնակ հարաբերություններին առնչվող խնդիրներ, մշակվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ՝ World Vision ՀԿ

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝ Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ